ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/174

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Բիգ պլաստ» ՍՊԸ-ի

տնօրեն՝ Կ. Աբրահամյանի (պետական ռեգիստրի վկայական՝ 273.110.05164),

լիազորված ներկայացուցիչ՝ Ս.Սիմոնյանի (լիազորագիր տրված՝ 01.08.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2020թ. թիվ 26/26-1/11705-2020 գրությամբ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 29.07.2020թ. թիվ 20/578 գրության հիման վրա, 06.08.2020թ. թիվ 26/26-1/11705-2020 գրությամբ նախաձեռնել է «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բիգ պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բիգ պլաստ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11» ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, որի համաձայն «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն պետք է իրականացներ մատակարարումները:

Մեր կողմից վերը նշված պարտավորությունը ոչ լիարժեք կատարելու պատճառ է հանդիսացել բացառապես այն հայտնի իրողությունը, որ COVID-19 համավարակով պայմանավորված ամբողջ աշխարհում, այդ թվում այն երկրում, որտեղից «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն պետք է ներմուծեր պայմանագրի գնման առարկա հանդիսացող ապրանքները, խաթարվել է «Arche» անվանմամբ դռան փականների արտադրման բնականոն ընթացքը, ինչով պայմանավորված արտադրող կազմակերպությունները չեն կարողացել ապահովել նախկին պայմանավորվածությունները:

Վերը նշվածն առարկայացված է նաև նրանով, որ առկա են եղել օդային և ցամաքային ճանապարհատրանսպորտային ուղիների բացարձակ սահմանափակումներ, ինչը մինչ օրս ամբողջությամբ չի վերացել, որպիսի հանգամանքը վնասներ է հասցրել նաև ներպետական ընկերություններին, մասնավորապես զրկելով վերջիններիս իրենց կողմից Պատվիրատուների հանդեպ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումից:

Նման իրավիճակից անմասն չի մնացել նաև «Բիգ Պլաստ» ՍՊ ընկերությունը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր՝ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության հանդեպ ունեցած պարտավորությունների ոչ ամբողջական կատարմանը:

Չնայած առկա իրավիճակին, «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն հնարավոր բոլոր տարբերակներով կազմակերպել է ապրանքների մատակարարումների մի մասը՝ արդյունքում կրելով լուրջ ֆինանսական կորուստներ:

Ստեղծված պայմաններում «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն կարողացել է 62-րդ չափաբաժնից մատակարարել է 25 հատը, իսկ մնացած 15-ը պայմանավորված վերը նշված իրողությամբ չի կարողացել մատակարարել:

Տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետությունում առկա արտակարգ դրության ռեժիմի դեպքում կարծում ենք, որ կիրառելի են եղել նաև Պայմանագրի 7-րդ կետով նախատեսված կարգավորումները, որի համաձայն՝ /պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն

ազատվում են պարտավորություններից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակ է արտակարգ դրություն հայտարարելը, որը անհնարին է դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին/:

Չնայած որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս պահպանված է արտակարգ դրության իրավական ռեժիմը, սակայն որոշակիորեն մեղմվել են տրանսպորտային հաղորդակցության սահմանափակումները, «Բիգ պլաստ» ՍՊԸ-ն հնարավորություն է ստացել և ցանկություն ունի Պատվիրատուին մատակարարել 62-րդ չափաբաժնից մնացած 15 հատ դռան փականները:

Նկատի ունենալով, որ համավարակով պայմանավորված խախտվել են բազմաթիվ պայմանագրաիրավական հարաբերություններ՝ ստանձնած պարտավորություններ, ինչպես միջազգային այնպես էլ ներպետական ոլորտներում, ինչի պատճառով մի շարք ընկերություններ հայտնվել են տնտեսական բարդ իրավիճակում (խնդրին անդրադաձել է նաև ՀՀ կառավարությունը), ուստի այս բարդ իրողության մեջ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեպքում, մեր ընկերությունը կկանգնի լրջագույն ֆինանսական խնդիրների առջև, ինչը կհանգեցնի խիստ բացասական հետևանքների:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված՝ է «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգից ելնելով, տվյալ դեպքում Պատվիրատուն փաստացի չի կարող մեզանից ընդունել վերը նշված ապրանքները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում առկա արտակարգ դրության ռեժիմի հիման վրա, ինչպես նաև Պայմանագրի 7-րդ կետով նախատեսված կարգավորումներից ելնելով, մեր կողմից Պատվիրատուին գրություն է ուղարկվել, այն մասին, որ առկա է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման անհնարինություն, ուստի 06.02.2020թ կնքված՝ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11 ծածկագրով պայմանագիրը պետք է համարվի լուծված՝ դադարեցված:

Վերը նշվածի հիման վրա 27.07.2020 թվականի գրությամբ Պատվիրատուի կողմից Պայմանագրի հիման վրա մեր նկատմամբ կիրառվել է 13,800 ՀՀ դրամի տուժանք, ինչը մեր կողմից վճարվել է:

Վերոգրյալի հաշվառմամբ, և հաշվի առնելով այն իրողությունը, որ այս պահին «Բիգ պլաստ» ՍՊԸ-ն հնարավորություն է ստացել ու ցանկություն ունի Պատվիրատուին մատակարարել 62-րդ չափաբաժնից մնացած 15 հատ դռան փականները, ինչին Պատվիրատուն նույնպես չի առարկում և համաձայն է քանի որ նշված ապրանքի կարիքն ունի, ուստի խնդրում ենք մերժել 06.08.2020թ թիվ 26/26-1/11705-2020 գրությամբ նախաձեռնած՝ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը՝ հնարավորություն տալով մեզ Պատվիրատուի առջև ստանձնած պարտավորությունն ամբողջությամբ կատարելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ խնդրո առարկայի վերաբերյալ Պատվիրատուի հետ ունեցել ենք համապատասխան քննարկում, որով վերջինս չի առարկել, և հայտնել է, որ այս պահին էլ ունի՝ 15 հատ դռան փականների կարիք, ուստի կարծում է, որ այդ դիրքորոշումը կարող է հայտնել նաև գործի քննարկման ժամանակ»:

«Բիգ պլաստ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/174 ընթացակարգի շրջանակներում 18.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը և ներկայացրել «MASKOM SAN TIC LTD ST1» ընկերության 23.07.2020թ. գրությունն ուղղված «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի տնօրենին, հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան մեր 17.05.2020թ., 20.06.2020թ. և 13.07.2020թ. կայացած մեր երկկողմանի քննարկումներին՝ մենք ևս մեկ անգամ հաստատում ենք, որ որպես միջնորդ՝ մենք ստացանք 15 կտոր «Arche» դռան փականներ համապատասխան մատակարարից և հանձնեցինք «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին՝ համաձայն՝ պատասխանատվություն ստանձնել:

Միևնույն ժամանակ, մենք ևս մեկ անգամ տեղեկացնում ենք Ձեզ, որ նշված ապրանքները չհանձնելը կապված են Covid-19 վիրուսի հետ:

Այս վիրուսի պատճառով ամբողջ աշխարհում չեղյալ են հայտարարվել ինչպես արտադրողների, այնպես էլ մատակարարների բազմաթիվ առաքումները:

Այս նամակով մենք ուզում ենք տեղեկացնել, որ մեր ընկերությունը արդեն ստացել է 15 կտոր «Arche» դռան փականներ և դրանք կարող են առաքվել 25.07.2020թ.-ից»:

3. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.07.2020թ. թիվ 20/578 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ ներկայացնում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար տնտեսական ապրանքների և շինանյութերի ձեռքբերման նպատակով 02.12.2019թ. «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մասնակցի՝ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/174 ընթացակարգի շրջանակներում 18.08.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 18.03.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 30 հատ «դռան փականներ, Թուրքիա, VHS», 40 հատ «դռան փականներ, ՌԴ, Apecs Ltd» և 50 հատ «դռան փականներ, Թուրքիա, Fealty, VHS, Endow,

Ensan, Kalip ve Makine San. Tic. Ltd. Sti» ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. ապրիլի 30-ը:

3. «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին ուղղված 27.07.2020թ. թիվ 20/570 ծանուցմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 18.03.2020թ. կնքված N 1 համաձայնագրի՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 30.04.2020թ. մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքները՝ թիվ 62 չափաբաժնով՝ 138000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի 40 հատ դռան փականներ, որից մասնակի մատակարարվել է 86250 ՀՀ դրամ գումարի 25 հատ դռան փականներ, իսկ 51750 ՀՀ դրամ ընդհանուր գումարի 15 հատ դռան փականներ մինչ օրս չեն մատակարարվել և 22.07.2020թ. գրությամբ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ն հրաժարվել է մատակարարել վերոհիշյալ ապրանքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) ենթակետը և 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 27.07.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2020թ. թիվ 26/26-1/11705-2020 գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 29.07.2020թ. թիվ 20/578 գրությունը և կից փաստաթղթերը, «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի 10.08.2020թ. դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 18.03.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 30 հատ «դռան փականներ, Թուրքիա, VHS», 40 հատ «դռան փականներ, ՌԴ, Apecs Ltd» և 50 հատ «դռան փականներ, Թուրքիա, Fealty, VHS, Endow, Ensan, Kalip ve Makine San. Tic. Ltd. Sti» ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. ապրիլի 30-ը:

«Բիգ պլաստ» ՍՊԸ-ին ուղղված 27.07.2020թ. թիվ 20/570 ծանուցմամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 18.03.2020թ. կնքված N 1 համաձայնագրի՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 30.04.2020թ. մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքները՝ թիվ 62 չափաբաժնով՝ 138000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի 40 հատ դռան փականներ, որից մասնակի մատակարարվել է 86250 ՀՀ դրամ գումարի 25 հատ դռան փականներ, իսկ 51750 ՀՀ դրամ ընդհանուր գումարի 15 հատ դռան փականներ մինչ օրս չեն մատակարարվել և 22.07.2020թ. գրությամբ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ն հրաժարվել է մատակարարել վերոհիշյալ ապրանքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) ենթակետը և 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 27.07.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Այսպիսով՝ Ընկերությունը, համաձայն 06.02.2020թ. կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՆՏ3/11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 18.03.2020թ. կնքված N 1 համաձայնագրի՝ մինչև 30.04.2020թ. պարտավոր էր մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքները՝ թիվ 62 չափաբաժնով՝ 138000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի 40 հատ դռան փականներ, որից չի մատակարարել 51750 ՀՀ դրամ ընդհանուր գումարի 15 հատ դռան փականներ և 22.07.2020թ. գրությամբ հրաժարվել է մատակարարել նշված ապրանքը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 27.07.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «MASKOM SAN TIC LTD ST1» ընկերությունը «Բիգ պլաստ» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված 23.07.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան մեր 17.05.2020թ., 20.06.2020թ. և 13.07.2020թ. կայացած մեր երկկողմանի քննարկումներին՝ մենք ևս մեկ անգամ հաստատում ենք, որ որպես միջնորդ՝ մենք ստացանք 15 կտոր «Arche» դռան փականներ համապատասխան մատակարարից և հանձնեցինք «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին՝ համաձայն՝ պատասխանատվություն ստանձնել:

<u>Միևնույն ժամանակ, մենք ևս մեկ անգամ տեղեկացնում ենք Ձեզ, որ նշված ապրանքները չհանձնելը կապված են Covid-19 վիրուսի հետ:</u>

Այս վիրուսի պատճառով ամբողջ աշխարհում չեղյալ են հայտարարվել ինչպես արտադրողների, այնպես էլ մատակարարների բազմաթիվ առաքումները:

Այս նամակով մենք ուզում ենք տեղեկացնել, որ մեր ընկերությունը արդեն ստացել է 15 կտոր «Arche» դռան փականներ և դրանք կարող են առաքվել 25.07.2020թ.-ից»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, մասնավորապես՝ «MASKOM SAN TIC LTD ST1» ընկերության, որպես միջնորդի գրությունը, գտնում եմ, որ Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ***քանի որ Ընկերությունը նման պայմաններում, այն է՝ պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի՝ Covid-19 համավարակի արդյունքում ստեղծված արտակարգ դրության և դրա հետևանքով կիրառված սահմանափակումների հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել, օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը կատարելու հնարավորությունից:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2020թ. թիվ 26/26-1/11705-2020 գրությամբ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**